



**ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՅ**  
ՀԻՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ԱՐԵԼՄԵՏԵԱՆ ԹԵՍԻ  
**WESTERN PRELACY**  
**OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA**  
Archbishop Moushegh Mardirossian, Prelate  
Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745, E-mail: Prelacy@aol.com



**ՅՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆՑ ՈՒ ՏԵԿՆԱՆՑ ՄԻՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՏԱՐԵԿԱՆ  
ՅԱՍՎԳՈՒՄԱՐԻՆ**

**ՄՐՏԲԱՑ ԳՈՐԾԱԿՑՈՒԹԵԱՄԲ ՈՒ ԱՌԱԽԵԼ ՆՈՒԻՐՈՒՄՈՎ  
ՅԱՌԱԶ ՏԱՏԻՆՔ ԹԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԵՐԸ**

**ԹԵԼԱՂՐԵՑ ԱՌԱՋՆՈՐԴ ՄՐԲԱՉԱՆԸ**

Արեւմտեան մեր Թեմի Ազգային Երեսփոխանական ժողովի ընթացիկ նստաշրջանի նախօրեակին, գեղեցիկ աւանդութիւն դարձած է, որ մեր Եկեղեցիներուն հոգաբարձական կազմերն ու տիկնանց միութիւններու վարչութիւնները ի մի խմբուին համագումարի մը, միասնաբար քննարկելու համար հասարակաց հարցեր, ծանօթանալու մեկզմեկու աշխատանքներուն ու ծրագիրներուն եւ միջոցներ որոնելու մարտահրաւերներ ու հարցեր միասնաբար դիմագրաւելու համար: Այս համագումարը խորքին մէջ մէկ մասնիկն է Երեսփոխանական ժողովին:

Թեմիս Ազգ. Երեսփոխանական ժողովի 35րդ նստաշրջանի նախօրեակին, հոգաբարձութեանց ու տիկնանց միութիւններու համագումարը տեղի ունեցաւ Յիսգաբթի, 17 Մայիսի Երեկոյեան, Ազգային Առաջնորդարանի նորակառոյց շենքի «Տիգրան Եւ Զարուհի Տէր Ղազարեան» սրահին մէջ, նախագահութեամբ Թեմիս բարեխնամ Առաջնորդ Բարձր. S. Մուշեղ Արք. Մարտիրոսեանի, մասնակցութեամբ Յոգեւոր Յայրերու, Ազգային Վարչութեան եւ Ազգ. Առաջնորդարանի Տիկնանց Օժանդակ Սարմին անդամներուն:

Համագումարին բացումը կատարեց Առաջնորդ Սրբազնը, որ նախ ներկաները հրաւիրեց միացեալ աղօթքի, ապա, բոլորին ներկայութիւնը ողջունեց Ազգ. Առաջնորդասրանի նորակառոյց յարկին տակ, հաստատութիւն մը՝ որ արդարուն ստացած է Ազգի Տունը կոչումը: Ան անդրադարձաւ այս համագումարին կարեւորութեան ու իմաստին, նշելով, որ անհիկա միայն փոխադարձ ծանօթացումի ու գեկուցումներ ներկայացնելու առիթ չէ, այլ մեր դիմագրաւած հարցերը



միասնաբար քննարկելու, միասնաբար լուծումներ որոնելու եւ գործակցութեան դաշտեր ստեղծելու կը ծառայէ:

Ըստ օրակարգին, Ազգ. Առաջնորդարանի Տիկնաց Օժանդակ Մարմինի, ապա նաեւ Եկեղեցիներու տիկնաց միութեանց ու հոգաբարձութեանց Ներկայացուցիչները հանդէս եկան հակիր զեկուցումներով: Համագումարը ծանօթացաւ իրաքանչիւր շրջանի մէջ տարուան ընթացքին տարուող մեղուաշան աշխատանքներու մանրամասնութեանց, ծրագիրներուն եւ մարտահրաւերներուն: Զեկուցումները կ'ընդգրկէին Երիտասարդական միաւորներու, Կիրակնօրեայ դպրոցներու, դպրաց դասերու եւ, մէկ խօսքով, հոգաբարձութեանց հովանիին տակ տեղի ունեցող զանազան աշխատանքներու դաշտերը: Զեկուցաբերները չքաւականացան միայն իրենց աշխատանքներուն ու ծրագիրներուն պատկերը ներկայացնելով, այլ նաեւ խօսեցան իրենց դիմագրաւած մասնակի ու ընդհանրական դժուարութիւններուն մասին, այն մտանեառումով, որ տարբեր շրջաններու մէջ ձեռք բերուած փորձառութիւնները կրնան օգտակար ըլլալ բոլորին:

Յատուկ զեկուցում մը Ներկայացուց Ազգ. Առաջնորդարանի քրիստոնեական Դաստիարակութեան բաժանմունքի վարիչներէն Գերպ. Տ. Միւուն Ծ. Վրդ. Ազնիկեան: Ան հանգամանօրէն խօսեցաւ այն աշխատանքներուն մասին, զորս այս բաժանմունքը կ'իրագործէ Առաջնորդ Սրբազնին ցուցմունքներով՝ նոր սերուդներու հոգեւոր դաստիարակութեան նպատակով, աշխատանքի դաշտ ունենալով Երիտասարդական ու պատանեկան խմբակները, Ս. Գրային սերտողութեան պահերը, Կիրակնօրեայ դպրոցները, պատանեկան Երգչախումբը Եւայլն: Ան նշեց, որ Կիրակնօրեայ դպրոցներու համար մշակուած են դաստիարակչական եւ ուսուցողական տարեկան ծրագիրներ, կը կազմակերպուին ուսուցչաց եւ աշակերտական համագումարներ ու հանդիպումներ, որոնց իրագործման համար սերտ գործակցութիւն կը տիրէ յիշեալ Բաժանմունքին, հոգեւոր հովիւներուն ու հոգաբարձութեանց միշեւ:

Խօսք առաւ Ազգ. Վարչութեան ատենապետ Դոկտ. Կարօ Յակոբեան. ան առաջին հերթին գնահատանք արձանագրեց տարուած աշխատանքին մասին, ապա նաեւ վարչութեան կողմէ որոշ թելարդանքներ ու յանձնարարութիւններ կատարեց համագումարին մասնակցողներուն, նկատողութիւններ՝ որոնք կրնան նպաստել աշխատանքներուն աւելի հեզասահ ընթացք տալու եւ գործակցութեան սերտացման: Ան գնահատանքով անդրադարձաւ այս նախաձեռնութիւններուն ու գործերուն, որոնք կը կատարուին որոշ շրջաններու մէջ, ու նկատել տուաւ, որ նման աշխատանքներու բոլոր շրջաններու վրայ տարածումը կը նպաստէ մեր թեմի յառաջդիմութեան:

Համագումարին Եգրափակիչ խօսքը արտասանեց Առաջնորդ Սրբազնը: Ան եւս գնահատանքով արտայայտուեցաւ զեկուցաբերներուն մասին, շեշտելով, որ այս ու նմանօրինակ համագումարներ պէտք է առիթ ծառայեն մեր աշխատանքներու յառաջ մղումին, որովհետեւ տեղքայլն ու ինքնաբաւութիւնը, ինքնին, նահանջի համազօր են: Ան ողջունեց բոլոր կազմերուն ծառայական ոգին ու իրաւուր ուղղեց յաւելեալ նուիրումի: Առաջնորդ Սրբազնը նաեւ անհրաժեշտ նկատեց, որ մեր բոլոր

աշխատանքներուն մեջ հարցերը պետք է դիմագրաւել սրտբացօրեն, առանց դժուարութիւններէ խուսափելու կամ զանոնք ծածկելու: Ան նկատել տուաւ, որ մեր Թեմին համար, այս տարիները ունին յատուկ իմաստներ, տրուած ըլլալով, որ 2007 տարին Յայ Լեզուի Տարի է, յառաջիկայ տարի մեր Թեմը պիտի տօնէ իր 35-րդ տարեդարձը: Վերջապէս, Առաջնորդ Սրբազնը յայտնեց, թէ պետք չէ բաւարարուիլ տարեկան այս համագումարով, այլ գործակցութիւնն ու աշխատանքները յառաջ տանելու համար, պետք է աւելի յաճախակի կերպով կազմակերպել նմանօրինակ հանդիպումներ, որոնք կրնան կայանալ շրջաններու Ներկայացուցիչներու շրջագիծին մեջ, եւ այս նպատակով, Ազգային Վարչութիւնը մօտիկ ապագային պիտի ստեղծէ համապատասխան մեթեսայ մը: Ան իր խօսքը եզրափակեց անգամ մը եւս զնահատանք արձանագրելով կատարուած աշխատանքին համար ու աւելի բծախնդրութիւն թելադրելով յառաջիկայ աշխատանքներուն մեջ, հաղորդակցութեասց զարգացումով:

Համագումարը վերջ գտաւ ժամը 10:15ին, Առաջնորդ Սրբազնին օրինութեան աղօթքով ու «Կիլիկիա»ի խմբերգումով:

#### AT THE BOARDS OF TRUSTEES AND LADIES ASSOCIATIONS ANNUAL MEETING

#### **WE MUST FURTHER OUR ENDEAVORS AND MISSION WITH RENEWED DEVOTION**

It has become tradition for the Boards of Trustees and Ladies Associations of our parishes to come together on the eve of the National Representative Assembly to collectively discuss issues of concern to our parishes and to reflect on means to overcoming challenges.

The annual meeting of the Boards of Trustees and Ladies Association took place on the evening of Thursday, May 17, at the “Dikran and Zarouhie Der Ghazarian” Hall, under the auspices of H.E. Archbishop Moushegh Mardirossian, Prelate, and with the participation of members of clergy, Executive Council, and the Prelacy Ladies Auxiliary Guild.

The meeting opened with collective prayer and welcoming remarks by the Prelate, followed by reports by the Prelacy Ladies Auxiliary, and parish Boards of Trustees and Ladies Associations, during which those in attendance were more closely familiarized with the activities of each parish as well as challenges facing each parish. A special report was given on the endeavors of the Christian Education Department by Co-Director Very Rev. Fr.



Muron Aznikian. With the guidance of the Prelate, the department continues to meet the spiritual needs of the new generation through youth groups, Bible studies, Sunday Schools, choirs, etc.

Speaking on behalf of the Executive Council, Chairman Dr. Garo Agopian highly commended all the parishes for their efforts and offered suggestions and ideas to assist in the expansion of their fields of activity. Closing remarks were delivered by the Prelate in which he once again offered his commendation and stressed the importance of such meetings to further our service to our people. The Prelate urged the participants to continue their work with renewed devotion and advised them not to shy away from challenge but rather to face and overcome them with an open heart and an open mind. The Prelate concluded his remarks by stating that it is not enough to meet once a year and that it is necessary to organize meetings of this nature more often to advance our mission.

The meeting came to a close with the benediction by the Prelate.

This email is broadcasted by [Western Prelacy of the Armenian Church of America](#) - 6252 Honolulu Ave, La Crescenta, CA 91214 - USA. If you have any questions or comments, please do not hesitate to call us at (818) 248-7737 or send us your request by email to [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org). Visit our Website [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org) Copyright . 2007 All rights reserved.